

ԼԱՐԻՍԱ ԱՎԱԳՅԱՆ

Կառավարում,
բակալավորիադ, 3-րդ կուրս

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հիմնաբառեր. պետական պարտք, ՀՆԱ, առաջանցիկ
տնտեսական աճ, արտահանում-ներմուծում,
արժույթի փոխարժեք

2020 թվականը նշանավորվել է Հայաստանի պարտության մեջ երկու արտաքին շոկերով: COVID-19 համաճարակն ու Արցախյան 44-օրյա պատերազմը վարթարացրին երկրի տնտեսական իրադրությունը: ՀՀ Կառավարության պետական պարտքը 2020 թվականից հատել է կարմիր գիծը և հասել է ռիսկային մակարդակի՝ խախտելով հարկաբյուջեի նկատմամբ 60%-ի շեմը: Սույն հոդվածում անդրադարձել ենք 2006-2020 թթ. պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությանը, վերահանել պետական պարտքի սպասարկման առավել կարևոր խնդիրները՝ զուգահեռաբար շեշտադրումներ կատարելով պետական պարտքի կառավարման տեսանկյունից արտահանման վրա հիմնված առաջանցիկ տնտեսական աճի ապահովման տեսլականին և արժույթի փոխարժեքին:

Ներածություն: Պետական պարտքի հիմնախնդիրը մշտապես արդիական է եղել, սակայն այժմ ավելի հաճախակի քննարկվող հարցերից է, քանի որ COVID-19 համաճարակի, պատերազմի հետևանքով պետական պարտքի շեմը հատեց ՀՆԱ-ի հետ հարաբերակցության թույլատրելի 60%-ը:

Ինչը հանգեցրեց պետական պարտքի անընդհատ աճին, ինչպես՝ կարելի է վերջինիս ցուցանիշը բերել նորմայի, ինչո՞վ են փոխադարձաբար կապված պետական պարտքը, արտահանումը, ներմուծումն ու արժույթի փոխարժեքը: Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխաններ կգտնեք հոդվածի վերլուծական հատվածում:

Գրականության ակնարկ: Երկրի տնտեսական աճի գլխավոր խոչընդոտը անընդհատ ավելացող պետական պարտքն է¹: Ա. Շիկլարեկը և Ֆ. Ռամոն-Բալեստերը 1970-2002 թթ. ընթացքում լատինամերիկյան 20 երկրներից նմուշառման վերլուծության արդյունքներով հանգել են այն եզրակացության, որ պետական պարտքը բացասաբար է անդրադառնում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և բնակչության արտադրողականության վրա²:

Չեչերիտա-Վեստֆալը, Հյուգ Հալթերը և Ռոթերը 2012-ին մշակել են տեսական մոդել, ըստ որի՝ բիզնես պարբերաշրջանի ընթացքում պարտքը կարող է տրվել միայն պետական ներդրումները ֆինանսավորելու համար, իսկ պետական պարտքի օպտիմալ մակարդակը որոշվում է պետական և մասնավոր կապիտալի հարաբերակցությամբ: Ըստ հեղինակների՝ արդարացված է այն պետական պարտքը, որն ապահովում է տնտեսական աճ³:

¹ Տե՛ս **César Calderón J. Rodrigo**, Government Debt and Economic Growth, America, 2013, էջ 4, <https://publications.iadb.org/publications/english/document/Government-Debt-and-Economic-Growth.pdf>

² Տե՛ս **Атаев А. М.**, Теоретические аспекты воздействия внешнего долга на динамику экономического роста, Россия, 2012, էջ 1, <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-aspekty-vozdeystviya-vneshnego-dolga-na-dinamiku-ekonomicheskogo-rosta/viewer>

³ Տե՛ս **Ugo Panizza, Andrea F. Presbitero**, Public debt and economic growth in advanced economies, Italy, 2013, էջ 3, <http://docs.dises.univpm.it/web/quaderni/pdfmofir/Mofir078.pdf>

Հիմք ընդունելով Վուի, Պատիլոյի և այլոց աշխատությունները՝ կարելի է եզրակացնել, որ գոյություն ունի միջակայք, որում պետական պարտքը բացասական ազդեցություն է թողնում տնտեսական աճի վրա: Ըստ հեղինակների՝ այդ միջակայքի ստորին շեմն է համարվում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության 33-35%-ը, իսկ վերին շեմը՝ 90%-ը, որը գերազանցելու դեպքում պետական պարտքի հետագա աճը ոչ մի ազդեցություն չի ունենա տնտեսության վրա¹:

Ըստ տնտեսագետ Թադևոս Ավետիսյանի՝ Հայաստանն ունի ֆինանսական անկայունություն, երկրի վարկունակության վարկանիշի անկում: Ցուցանիշները վկայում են, որ երկիրը խրվում է պարտքային ճգնաժամի մեջ, որի բացասական հետևանք կարող է լինել պետական պարտքի ներգրավման դժվարությունը²:

Ֆինանսների նախարարի պաշտոնակատար Ատոմ Զանջուղազյանն առաջարկում է հարկաբյուջետային համախմբում, որին կարելի է հասնել մասնավորապես ընթացիկ ծախսերի աճի, կառավարելիության ավելի բարձր մակարդակի և կապիտալ ենթակառուցվածքային ծրագրերի ուղղությամբ ներդրումների ավելացման ճանապարհով տնտեսական աճի ներուժի մեծացման շնորհիվ: Վերջինս հնարավորություն կտա քննարկելու ոչ թե կառավարության պարտքի բացարձակ մեծության նվազեցման (այդպիսի հարց օրակարգում չկա), այլ այդ պարտքը սպասարկելու հնարավորության մեծացման հարցը, ինչին կարելի է հասնել համախառն ներքին արդյունքի ավելի մեծ աճի և մեծ հնարավորությունների ճանապարհով: Նախարարի պաշտոնակատարը նշում է, որ իրատեսական է համարում մինչև 2026 թվականն այդ հարաբերակցությունը նվազեցնելը³:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածում կիրառվել են տնտեսագիտական ոլորտում հայտնի հետազոտական մեթոդներ, մասնավորապես՝ արտաձուլման, մակաձուլման, համեմատական, գիտական վերացարկման, գրաֆիկական, հիմնարար, քանակական, որակական:

Նախևառաջ իրականացվել է հիմնարար հետազոտություն, որի միջոցով հասկանալի են դարձել պետական պարտքի ավելացման պատճառները, այնուհետև՝ քանակական հետազոտություն, որը հնարավորություն է ընձեռել քանակապես նկարագրելու առկա խնդրի ցուցանիշները, նաև՝ որակական հետազոտություն, որի ընթացքում կիրառվել են տրամաբանության և պատճառաբանության, բացատրական հետազոտության մեթոդներ (թույլ է տալիս բացատրել հեղինակի մոտեցումը խնդրին):

Վերլուծություն: Հայաստանն անկախացումից ի վեր և մինչև 2008 թվականը արձանագրեց արագ տնտեսական աճ: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, մշտական դոլարային արտահայտությամբ, այդ տարիներին եռապատկվեց: ՀՆԱ-ի աճի տեմպը հասավ ռեկորդային բարձր՝ 14%-ի:

¹ Տե՛ս **Vu Y. H., Nguyen N. T., Nguyen T. T. T., Pham A. T. L.**, "The threshold effect of government's external debt on economic growth in emerging countries", America, 2019, էջ 447-448, doi:10.1007/978-3-030-04200-4_32

² Տե՛ս «**Փաստ» օրաթերթ**, Անգործությունը, ծախողումներն ու ապաշնորհությունը պետական պարտքով են ծածկում, Թադևոս Ավետիսյանը՝ պետական պարտքի մասին, Հայաստան, 2021, <https://past.am/?p=267974&l=am>

³ Տե՛ս «**Ազատություն» ռադիոկայան**, Գործադիրը նախատեսում է մինչ 2026-ը պետական պարտքը ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ 60%-ից նվազեցնել, Հայաստան, 2021, <https://www.youtube.com/watch?v=Ub4oEq-AxmE>

Այս ժամանակահատվածում աճի հիմնական շարժիչը ոչ առևտրային ոլորտներն էին, մասնավորապես՝ շինարարությունը, որը սնուցվում էր դրամական փոխանցումների զգալի ներհոսքով և պակաս չափով՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներով: Շինարարությունը, իրական արտահայտությամբ, 2002-ից 2008 թվականն աճում էր միջինը 28%-ով՝ նպաստելով այդ ժամանակահատվածի ՀՆԱ-ի աճի գրեթե մեկ երրորդին: 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամը վեր հանեց Հայաստանի տնտեսության խոցելիությունները, երբ արտահանումը, դրամական փոխանցումները և ՕՈՒՆ-ը շեշտակիորեն նվազեցին: Շինարարության ոլորտի շուրջ 40% անկումը 2009 թ. պայմանավորեց այդ տարում ՀՆԱ-ի 14.1% «փլուզման» ավելի քան երկու երրորդը¹: Ճգնաժամին ի պատասխան՝ կառավարությունը ձեռնարկեց լայնածավալ միջոցառումներ, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ: Դրանց զգացի մասը ՀՀ-ն կարողացավ ձեռք բերել՝ պետական պարտքն ավելացնելու հաշվին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ պետական պարտքը 2008 թ. կազմել է 1 միլիարդ 906 միլիոն ԱՄՆ դոլար², ինչը ՀՆԱ-ի 16.4%-ն էր: Հաջորդ՝ 2009 թ. պետական պարտքը կտրուկ աճ է գրանցել՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով և կազմել է 3 միլիարդ 375 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը ՀՆԱ-ի 39%-ն էր: 2008 թ. արտահանումը կազմել է 1 միլիարդ 60 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ 2009-ին կրճատվել է՝ հասնելով 768 միլիոն ԱՄՆ դոլարի³:

2015 թ. հունիսին ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ խորհրդարանը ընդունեց մի օրինագիծ, ըստ որի՝ ԿԲ-ի վերցրած պարտքն այդուհետև չէր ներառվելու պետական պարտքի մեջ, ինչը հնարավորություն էր տալիս կառավարությանը նոր պարտքեր վերցնելու: Հայաստանի օրենսդրության համաձայն՝ երկրի պետական պարտքը՝ արտաքին ու ներքին պարտքը միասին, չի կարող գերազանցել նախորդ տարվա ՀՆԱ-ի 60%-ը⁴: Օրենսդրական այդ փոփոխության համաձայն՝ այդուհետև նշված սահմանափակման ներքո էին լինելու միայն կառավարության վերցրած պարտքերը:

2020 թ. պետական պարտքը դարձավ 7 միլիարդ 986.5 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է ՀՆԱ-ի 63%-ը (դոլարային արտահայտությամբ կամ էլ 67.4%-ը՝ դրամային արտահայտությամբ): Պետական պարտքի աճը նախորդ տարիների ընթացքում կարող ենք տեսնել գծապատկեր 1-ում⁵:


¹ Տե՛ս Երկրի գործընկերության ռազմավարություն, Հայաստան, 2014, <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf>

² Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Պետական ֆինանսներ, Հայաստան, 2014, էջ 17, https://www.armstat.am/file/article/finansner_14_1.pdf

³ Տե՛ս ՀՀ պետական պարտքերի կոմիտե, Արտահանման վիճակագրություն, Հայաստան, 2009, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIEExportStatistics>

⁴ Տե՛ս «ՀՀ պետական պարտքի մասին օրենք», գ. 1, հոդված 5, կետ 6, Եր., 18.06.2008, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=49156>

⁵ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, Հայաստան, 2021, էջ 24, https://www.armstat.am/file/article/finansner_2021_1.pdf



Գծապատկեր 1. ՀՀ պետական պարտքի և ՀՆԱ-ի փոփոխությունները 2006-2020 թթ. (միլիոն ԱՄՆ դոլար)

2016-2019 թթ. հաջողվեց ՀՆԱ-ի աճ ապահովել առանց տատանումների: Անգամ 2019 թ. հանրահայտ Time ամսագիրը, տպավորված լինելով 18 ամիսների ընթացքում ՀՀ տնտեսական աճով, անվանել է այն «Կովկասյան վագր»¹: Սակայն, դրա հետ մեկտեղ, ավելացավ նաև պետական պարտքի չափը՝

2016 թ. 5.9 միլիարդ ԱՄՆ դոլարից 2019-ին հասնելով 7.3 միլիարդի:

2020 թ. COVID-19 համաճարակի, Ադրբեջանի դեմ մղվող պատերազմի հետևանքով տնտեսությունն ունեցավ կտրուկ 7.4% անկում՝ հանգեցնելով պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության նորմայի խախտմանը:

Համաշխարհային բանկը 2021 թ. նշել է, որ ՀՀ-ն գտնվում է առողջացման, վերականգնման փուլում և չի կարողանա ապահովել կայուն տնտեսական աճ, քանի դեռ ամբողջությամբ չի օգտագործել իր ներուժը, չի կասեցրել արտագաղթը: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածության պահանջարկը շարունակում է խաթարել ներդրողների վստահությունը և սրել առկա մարտահրավերները²:

2021 թ. նոր գործարքի հետևանքով³ ՀՀ պետական պարտքը հատեց 9 միլիարդ ԱՄՆ դոլարի շեմը: 2016-2021 թթ. պետական պարտքը աճել է շուրջ 3 միլիարդ ԱՄՆ դոլարով: Եթե նույնպիսի աճ գրանցվի նաև հաջորդ 5 տարվա ընթացքում, ապա ՀՀ-ն կհայտնվի արտաքին պետական պարտքի ճգնաժամային իրադրությունում: Դա կանխելու համար անհրաժեշտ է մշակել պետական պարտքի մարման ռացիոնալ նախագիծ:


Կառավարության պարտքում գերակշռում է արտարժույթով ներգրավված պարտքը, որը 2019-ին կազմել է 79.2%, իսկ 2020-ին՝ 75.6%: 2020 թ. դրությամբ պարտքի արժեքային կառուցվածքն ավելի մանրամասն ներկայացված է գծապատկեր 2-ում⁴:

¹ Տե՛ս Time ամսագիր, Հայաստանը՝ կովկասյան վագր, 2019, <https://www.newsinfo.am/eng/article/view/4kWOirhSAw>


² Տե՛ս World bank, The World Bank in Armenia, 2021, <https://www.worldbank.org/en/country/armenia/overview#1>

³ Տե՛ս «Ազատություն» ռադիոկայան, Հայաստանի պետպարտքը մոտեցել է 9,3 միլիարդ ԱՄՆ դոլարին, Հայաստան, 2022, <https://www.azatutyun.am/a/31724973.html>

⁴ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության պարտքը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Հայաստան, 2020, էջ 7, <https://www.minfin.am/website/images/files/9079be69.pdf>



Գծապատկեր 2. Պետական պարտքի կառուցվածքը 2020 թ. դրությամբ



Գծապատկեր 3. Կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը

2020 թ. տարեվերջին ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2054 թվականը, իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2050-ը¹: Պետական պարտքի մարմանը տանող լավագույն ճանապարհը առաջանցիկ տնտեսական աճն է, որը հնարավոր է կապիտալ ծախսերի ավելացմամբ և ընթացիկ ծախսերի նվազմամբ: Մինչդեռ 2020 թ., երբ ճգնաժամից խուսափելու լավագույն եղանակը կապիտալ ծախսերի կատարում/գերակատարումն էր, այն նախատեսված 287.7 միլիարդ ՀՀ դրամից հասավ 226.2 միլիարդ ՀՀ դրամի, իսկ ընթացիկ ծախսերը հասան 1.7 տրիլիոն ՀՀ դրամի: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի նվազումը բացասական ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն ընթացիկ տարվա, այլ նաև հաջորդ տարիների

¹ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թթ. ռազմավարական ծրագիր, Հայաստան, 2021, էջ 14, https://www.minfin.am/hy/page/partqi_razmavarutyun/

ՀՆԱ-ի վրա, եթե անգամ հաջորդող տարիների ընթացքում կապիտալ ծախսերի չափը աճ գրանցի¹: Ընթացիկ ծախսերի իրականացումը կարճաժամկետում խթանում է տնտեսական զարգացումը, սակայն երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից առավելապես կարևորվում է կապիտալ ծախսերի իրականացումը: Հետևաբար, փոխառությունների ներգրավումը հատկապես արդյունավետ կարող է լինել տնտեսության համար, եթե դրանք ուղղվեն կապիտալ ծախսերին: Այլ կերպ ասած՝ խնդիրը ոչ թե պետական պարտքի ավելացումն է, այլ ծախսերը ճիշտ ղեկավարելու հմտությունը: Տնտեսական նոր ծրագրեր իրականացնելու համար վերցված պարտքը խրախուսելի է, քանի որ այդ ծրագրերը հետագայում կբերեն եկամուտներ, որոնց միջոցով էլ կսպասարկվի վերցված պետական պարտքը: 2020 թ. Նվազած կապիտալ ծախսերն աճ են գրանցել 2021-ի պետական բյուջեի մասին օրենքում՝ հասնելով 250, 2022-ին՝ 326 միլիարդ ՀՀ դրամի: Ընթացիկ ծախսերը նախատեսված են 2021-ին հասցնել 1.6, իսկ 2022-ին՝ 1.7 տրիլիոն ՀՀ դրամի²: Պետք է վերանայվեն և չեղարկվեն բոլոր այն ընթացիկ ծախսերը, որոնց չկատարումը բացասական հետևանք չի ունենա, հակառակ դեպքում ստացվում է, որ պետությունը պարտք է վերցնում, որպեսզի իրականացնի ընթացիկ ծախսեր: Պետական ֆինանսների «ոսկե կանոնների» հիմքում այն ձևակերպումն է, որ ընթացիկ ծախսերը չպետք է աճեն պետական պարտքի հաշվին: Սակայն, այս «ոսկե կանոնները» խախտված են: COVID-19 համաճարակի հետևանքով տուժել են շատ երկրների տնտեսություններ, որոնք, սակայն, ավելացնելով իրենց պետական պարտքը, փորձել են մեղմել տնտեսական անկումը: Այլ կերպ ասած՝ այդ օրերին վերցված պետական պարտքը պետք է ուղղված լիներ տնտեսական անկման կանխարգելմանը, այլ ոչ՝ ընթացիկ ծախսերի իրականացմանը:


2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Հայաստանի իշխանությունները հայտարարեցին, որ տնտեսական զարգացման ռազմավարությունը փոխվում է և «շինարարական փուլիկից» անցում է կատարվելու արտահանման խթանմանը: 2011 թ. դեկտեմբերի 15-ին կառավարությունը հավանության արժանացրեց «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը», ըստ որի՝ նախատեսված էր 2020 թվականը փակել արտահանման եռապատիկ աճով՝ այն հասցնելով մինչև 3.3 միլիարդ ԱՄՆ դոլարի³: Սակայն, չհաջողվեց: 2020 թվականը փակվեց արտահանման 2.5 միլիարդ ԱՄՆ դոլարով, ինչը 2008-ի արտահանման համեմատ աճել է 1.5 միլիարդով:

Համեմատելով ներմուծումը արտահանման հետ՝ կարող ենք նկատել, որ 2006–2020 թթ. ներմուծման ամենաբարձր տոկոսային աճ գրանցվել է 2007 թ.՝ կազմելով նախորդ ժամանակաշրջանի 149.1%-ը: Ներմուծման ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2019-ին՝ կազմելով 5 միլիարդ 538 միլիոն ԱՄՆ դոլար:

¹ Տե՛ս «Լույս» թերթ, 2020 թ. շուկերի ազդեցությունները ՀՀ Կառավարության պարտքի վրա, Հայաստան, 2020, էջ 16, <https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04-%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf>

² Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարություն, 2021-2023 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Հայաստան, 2020, էջ 34, https://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsagreg/

³ Տե՛ս «Ազատություն» ռադիոկայան, Հայաստանի արտաքին պարտքն ավելի արագ է աճում, քան արտահանումը, Հայաստան, 2015, <https://www.azatutyun.am/a/27129483.html>



Գծապատկեր 4. Արտահանում-ներմուծում համեմատությունը 2006-2020 թթ.

Ըստ գծապատկերի՝ արտահանում-ներմուծում ամենացածր հարաբերակցությունը գրանցվել է 2008-2009 թթ.: 2008-ին ներմուծումը կազմել է 4 միլիարդ 426 միլիոն ԱՄՆ դոլար կամ այդ տարվա ՀՆԱ-ի 37.95%-ը, իսկ արտահանումը՝ 1 միլիարդ 57 միլիոն ԱՄՆ դոլար՝ այդ տարվա ՀՆԱ-ի 9.06%-ը կամ ներմուծման 23.89%-ը: 2009-ին ներմուծումը կազմել է 3 միլիարդ 321 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է այդ տարվա ՀՆԱ-ի 38.4%-ը, իսկ արտահանումը՝ 710.2 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը հավասար է համապատասխան տարվա ՀՆԱ-ի 8.21%-ին կամ ներմուծման 21.39%-ին: Ցածր ցուցանիշները պայմանավորված են եղել ֆինանսատնտեսական ճգնաժամով:

Ամենաբարձր հարաբերակցությունը գրանցվել է 2020-ին՝ կազմելով 55.35%, ինչը, սակայն, չի կարելի դրական տեղաշարժ համարել, քանի որ համեմատելով նախորդ տարվա հետ՝ կնկատենք, որ արտահանումը կրճատվել է 4%-ով, ինչը պայմանավորված է եղել COVID-19 համաճարակով և պատերազմով:

2020-ի մաքսային ամենաբարձր արժեք ունեցող արտահանվող ապրանքների հնգյակն է՝ պղնձի հանքաքար և խտահանք, ոսկի, սիգար, էթիլային սպիրտ, մոլիբդենի հանքաքար և խտահանք¹:

Եթե հաշվենք արտահանման արժեքով, ապա 2020-ին ՌԴ արտահանվել է 673 միլիոն ԱՄՆ դոլարի ապրանք, Շվեյցարիա՝ 453 միլիոն, Չինաստան՝ 287 միլիոն (ինչը նախորդ տարվա համեմատ գրանցել է 48% աճ՝ պայմանավորված ՀՀ-ից մոլիբդենի արտահանման կտրուկ աճով, սակայն մաքսային արժեքը կրճատվել է 20%-ով, որի հետևանքով մոլիբդենի հսկայածավալ արտահանումը մեծ եկամուտ չի բերում), Իրանի Իսլամական Հանրապետություն՝ 82 միլիոն և Գերմանիա՝ 55 միլիոն ԱՄՆ դոլարի ապրանք²:

Ապրանքների արտահանումը խթանելու համար բազմաթիվ նպաստավոր պայմաններ կան, որոնցից են ԵՄ անդամակցությունը, ԵՄ տարածքում GSP+ արտոնյալ ռեժիմի իրավունքը, Առևտրային համաշխարհային կազմակերպությանն անդամակցությունը և այլն: Այս ամենով հանդերձ՝ պետք է մեծանա մեր կազմակերպությունների նկատմամբ պետական աջակցությունը, օրինակ՝ ար-

¹ Տե՛ս ՀՀ պետական տնտեսի կոմիտե, ՀՀ ապրանքաշրջանառությունը՝ ըստ մաքսային բարձր արժեք ունեցող ապրանքների, ըստ երկրների, Հայաստան, 2020, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIEExportStatistics>

² Տե՛ս UN Comtrade, Արտահանման վիճակագրություն, 2020, <https://comtrade.un.org/>

տահանմանն առնչվող վարչարարության պարզեցման, հավաստման հայաստանյան փաստաթղթերի ճանաչելիության ապահովման, ծագման և որակի համապատասխանության սերտիֆիկացման միջոցով:

Ներմուծման տեսակարար կշիռ ունեցող հնգյակ երկրներն են Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը, Գերմանիան և Թուրքիան, որոնցից ներմուծվել է համապատասխանաբար 495 միլիոն, 663 միլիոն, 317 միլիոն, 238 միլիոն և 230 միլիոն ԱՄՆ դոլարի ապրանք:


2020-ի մաքսային ամենաբարձր արժեք ունեցող ներմուծվող ապրանքների հնգյակն է՝ բնական գազ, նավթ, դեղամիջոցներ, հեռախոսային ապարատներ, ադամանդ:

Ուսումնասիրելով հաջորդ՝ համեմատաբար ավելի ցածր մաքսային արժեք ունեցող այն ապրանքները, որոնք, սակայն, գտնվում են մաքսային ամենաբարձր արժեք ունեցող ներմուծվող ապրանքների 35-յակում, կտեսնենք, որ մեծ տեսակարար կշիռ ունեն վերջնական սպառման արտադրանքները, ինչպիսիք են, օրինակ, ավտոմեքենաները, համակարգիչները, շարժիչային փոխադրամիջոցները, սառնարանները և այլն:

Արտահանման անկումը ներմուծման համեմատ արդարացված կլիներ, եթե ներմուծվող ապրանքները լինեին միջանկյալ սպառման բարիքներ, որոնք, հաջորդ տարիների ընթացքում դառնալով վերջնական սպառման բարիք, կարտահանվեին ու կփոխհատուցեին այն վնասը, որն այժմ առկա է ներմուծման գերակայության պատճառով:

Արտահանման միջոցով ՀՀ-ն կստանա արտարժույթ, որով էլ կմարի արտարժույթով վերցված պետական պարտքը: Սակայն, արտահանման մեծ կշիռը ՀՆԱ-ում նույնպես չի խրախուսվում, քանի որ այդ դեպքում պետությունը մեծ կախում է ձեռք բերում արտաքին գործընկերներից: Արժույթի փոխարժեքի փոփոխությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ այն դեպքում, երբ պետական պարտքի մարումն իրականացվի ոչ թե ԱՄՆ դոլարով, այլ ՀՀ դրամով:

Ստորև ներկայացված են արժույթի փոխարժեքի փոփոխությունները՝ սկսած 2006 թվականից, ամեն տարվա դեկտեմբերի 30-ի տվյալներով՝ ըստ ՀՀ ԿԲ-ի¹:



Գծապատկեր 5. Արժույթի փոխարժեքի փոփոխությունը 2006–2020 թթ.

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ, Արժույթի փոխարժեքի արխիվ, Հայաստան, 2021, <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx>

2008-ին 1 ԱՄՆ դոլարը համարժեք էր մոտավորապես 307 ՀՀ դրամին: ՀՀ-ն այդ տարի իր արտաքին պարտքն ավելացրեց 129 միլիոն ԱՄՆ դոլարով¹, որը եթե վերածենք ՀՀ դրամի, կստացվի 39 միլիարդ 603 միլիոն ՀՀ դրամ: 2020-ին, երբ մեկ դոլարը համարժեք էր 523 ՀՀ դրամին, 2008-ին վերցված մեր արտաքին պետական պարտքը մարելու դեպքում պիտի վճարեինք 67 միլիարդ 467 միլիոն ՀՀ դրամ, այլ կերպ ասած՝ 27 միլիարդ 864 միլիոն ՀՀ դրամով ավելի: Արժույթի փոխարժեքի փոփոխության պատճառով ահռելի կորուստներ են ստացվում: Եվ եթե հաշվի առնենք տատանումները՝ կնկատենք, որ պետական պարտքը մարելը ավելի ձեռնտու կլինի հենց արտահանման միջոցով (օգտագործելով արտահանումից ստացված արժույթը):

Ցանկացած երկրի երկարաժամկետ զարգացման նախադրյալը հետևյալ 4 հենասյուների ապահովումն է.

- անվտանգություն,
- հարկաբյուջետային քաղաքականություն,
- դրամավարկային քաղաքականություն,
- քաղաքական կայունություն:

Այժմ ՀՀ-ում այս հենասյուները թուլացած են: Դրանց ամրապնդմանը կարելի է հասնել բացառապես առաջանցիկ տնտեսական աճի և անվտանգության հիմնահարցերը կարգավորելու միջոցով: Այս ամենի իրականացումը ներդրումային գրավիչ դաշտի հիմք կհանդիսանա, ինչը կնպաստի տնտեսական աճին: Ընդ որում, կարևոր են ոչ միայն ներքին, այլև արտաքին ներդրումները: Ներքին միջոցները առաջանցիկ տնտեսական աճ ապահովելու համար բավարար չեն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ՝ օտարերկրյա կապիտալը ՀՀ բերելու համար:

Եզրակացություն: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության խախտումը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ պետական պարտքն ուղղվում է ոչ թե ընթացիկ, այլ կապիտալ ծախսերի սպասարկմանը կամ երկրում հնարավոր տնտեսական անկման մեղմացմանը: Անհրաժեշտ է վերանայել ծախսային ուղղությունները և կրճատել ընթացիկ՝ տնտեսական աճ չգեներացնող ծախսերի ֆինանսավորումը՝ սահմանելով հստակ առաջնահերթություններ, որոնք բխում են տնտեսության առջև ծառացած մարտահրավերներից: Պետական պարտքի արագ մարման և պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նորմայի հասցնելու համար անհրաժեշտ է խթանել ապրանքների արտահանումը՝ մեծացնելով ՀՆԱ-ում դրա տեսակարար կշիռը: Զուգահեռաբար առավել կարևորվում է բյուջետային կարգապահությունը՝ հստակ վերահսկելով կատարվող ծախսերի արդյունավետությունը, ինչպես նաև անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ՀՀ Կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման գործողություններ:

¹ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Պետական ֆինանսներ, Հայաստան, 2013, էջ 18, https://www.armstat.am/file/article/finansner_13_1,2.pdf

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ պետական պարտքի մասին օրենք», գ.1, հոդված 5, կետ 6, Եր., 18.06.2008, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=49156>
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, Պետական ֆինանսներ, Հայաստան, 2014, https://www.armstat.am/file/article/finansner_14_1.pdf
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, Հայաստան, 2021, https://www.armstat.am/file/article/finansner_2021_1.pdf
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, Արտահանում, Հայաստան, 2021, <https://armstat.am/am/?nid=12&id=10003&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, Ներմուծում, Հայաստան, 2021, <https://armstat.am/am/?nid=12&id=10004&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, Պետական ֆինանսներ, Հայաստան, 2013, էջ 18, https://www.armstat.am/file/article/finansner_13_1,2.pdf
7. ՀՀ պետեկամուտների կոմիտե, ՀՀ ապրանքաշրջանառությունը՝ ըստ մաքսային բարձր արժեք ունեցող ապրանքների, ըստ երկրների, Հայաստան, 2020, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIEExportStatistics>
8. ՀՀ պետեկամուտների կոմիտե, Արտահանման վիճակագրություն, Հայաստան, 2009, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIEExportStatistics>
9. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թթ. ռազմավարական ծրագիր, 2021, էջ 14, https://www.minfin.am/hy/page/partqi_razmavarutyun/
10. ՀՀ ֆինանսների նախարարություն, 2021-2023 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Հայաստան, 2020, էջ 34, https://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsagreg/
11. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության պարտքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, Հայաստան, 2020, էջ 7, <https://www.minfin.am/website/images/files/9079be69.pdf>
12. ՀՀ ԿԲ, Արժույթի փոխարժեքի արխիվ, Հայաստան, 2021, <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx>
13. Երկրի գործընկերության ռազմավարություն, Հայաստան, 2014, <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf>
14. Կ. Գրիգորյան, Գ. Ավագյան, Ն. Կարապետյան, Լ. Մխիթարյան, ՀՀ պետական պարտքի կայունության հիմնախնդիրները, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, Հայաստան, 2021, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-2/21.2-2.pdf>
15. Ք.Վարդանյան, Գ.Ավագյան, Լ.Մխիթարյան, Ն.Կարապետյան, Մակրոտնտեսական քաղաքականությունները և պետական պարտքի կուտակումը ՀՀ-ում, «Ալլընտրանք» գիտական հանդես, Հայաստան, 2020, <http://alternative.am/wp-content/uploads/2020/09/%D5%94.%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86%D5%85%D4%B1%D5%86%D4%B3.%D4%B1%D5%8E%D4%B1%D4%B3%D5%85%D4%B1%D5%86-%D4%BC%D5%84%D4%BD%D4%BB-%D4%B9%D4%B1%D5%90%D5%85%D4%B1%D5%86-%D5%86.%D4%BF%D4%B1%D5%90%D4%1%D5%8A%D4%B5%D5%8F%D5%85%D4%B1%D5%86%D5%84%D5%A1%D5%AF%D6%80%D5%B8%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%D6%87%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D6%84%D5%AB-%D5%AF%D5%B8%D6%82%D5%BF%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8%D5%80%D5%80%D5%B8%D6%82%D5%B4.pdf>
16. 2020 թ. շուկերի ազդեցությունները ՀՀ Կառավարության պարտքի վրա, «Լույս» թերթ, Հայաստան, 2020, էջ 16,

- <https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04-%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf>
17. Անգործությունը, ծախողումներն ու ապաշնորհությունը պետական պարտքով են ծածկում, Թադևոս Ավետիսյանը՝ պետական պարտքի մասին, «Փաստ» օրաթերթ Հայաստան, 2021, <https://past.am/?p=267974&l=am>
 18. «Ազատություն» ռադիոկայան, Գործադիրը նախատեսում է մինչ 2026-ը պետական պարտքը ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ 60%-ից նվազեցնել, Հայաստան, 2021, <https://www.youtube.com/watch?v=Ub4oEq-AxmE>
 19. «Ազատություն» ռադիոկայան, Հայաստանի պետպարտքը մոտեցել է 9,3 միլիարդ դոլարին, Հայաստան, 2022, <https://www.azatutyun.am/a/31724973.html>
 20. «Ազատություն» ռադիոկայան, Հայաստանի արտաքին պարտքն ավելի արագ է աճում, քան արտահանումը, Հայաստան, 2015, <https://www.azatutyun.am/a/27129483.html>
 21. Time ամսագիր, Հայաստանը՝ կովկասյան վագր, 2019, <https://www.newsinfo.am/eng/article/view/4kWOirhSAw>
 22. А. М. Атаев, Теоретические аспекты воздействия внешнего долга на динамику экономического роста, Россия, 2012, <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-aspekty-vozdeystviya-vneshnego-dolga-na-dinamiku-ekonomicheskogo-rosta/viewer>
 23. World bank, The World Bank in Armenia, 2021, <https://www.worldbank.org/en/country/armenia/overview#1>
 24. World Bank, The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, 2007, <https://openknowledge.worldbank.org/handle/10986/6644>
 25. UN Comtrade, Արտահանման վիճակագրություն, 2020, <https://comtrade.un.org/>
 26. Ugo Panizza, Andrea F. Presbitero, Public debt and economic growth in advanced economies, Italy, 2013, <http://docs.dises.univpm.it/web/quaderni/pdfmofir/Mofir078.pdf>
 27. Vu Y. H., Nguyen N. T., Nguyen T. T. T., Pham A. T. L., The threshold effect of government's external debt on economic growth in emerging countries, America, 2019, doi:10.1007/978-3-030-04200-4_32
 28. César Calderón J. Rodrigo, Government Debt and Economic Growth, America, 2013, <https://publications.iadb.org/publications/english/document/Government-Debt-and-Economic-Growth.pdf>

ЛАРИСА АВАГЯН

Менеджмент, бакалавриат, 3-й курс

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ В ПОСТКРИЗИСНЫЙ ПЕРИОД

Ключевые слова: *государственный долг, ВВП, опережающий экономический рост, экспорт-импорт, валютный курс*

2020 год ознаменовался двумя внешними потрясениями в истории Армении: эпидемия COVID-19 и война с Азербайджаном, которые ухудшили экономическое положение страны. Государственный долг Правительства РА с 2020 года пересек красную черту, достиг рискованного уровня, нарушив золотое правило фискальной системы, превысив порог в 60% ВВП. В этой статье мы рассматриваем соотношение долга к ВВП за 2006–2020 годы и определяем наиболее важные вопросы обслуживания государственного долга, уделяя особое внимание обменному курсу и видению обеспечения экспортно-ориентированного экономического роста с точки зрения управления государственным долгом.

LARISA AVAGYAN

Management, Bachelor's Degree, 3rd Year**PUBLIC DEBT MANAGEMENT ISSUES IN THE POST-CRISIS PERIOD****Keywords:** government debt, GDP, advanced economic growth, export-import, exchange rate

2020 was marked by two external shocks in the history of Armenia: the COVID-19 pandemic and the war against Azerbaijan worsened the economic situation of the country. The government debt of the Republic of Armenia has crossed the red line since 2020, reaching a risky level, violating the golden rule of fiscal budget, exceeding the threshold of 60% of GDP. In this article, we look at the public debt / GDP ratio for 2006-2020, identifying the most important public debt service issues, while emphasizing exchange rate and the vision of ensuring progressive export-based economic growth in terms of public debt.

ՄԱՐԻԱՄ ԲԱՂՅԱՆ

Կառավարում,

բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *դրամական անկում, դրամական աճ, կորոնավիրուսային համավարակ, աճի տեմպ*

2020 թվականին ի հայտ եկած կորոնավիրուսային համավարակը մեծ ազդեցություն ունեցավ ՀՀ տնտեսության վրա: Սույն հետազոտության մեջ վեր են հանվել կորոնավիրուսային համավարակի պայմաններում ՀՀ տնտեսության մեջ ծագած խնդիրները, դրանց հետևանքները տնտեսական ակտիվության ցուցանիշների վրա, անդրադարձ է կատարվել ՀՀ Կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային ծրագրերին, դրանց արդյունավետությանը: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ տնտեսությունը խորապես տուժել է համավարակից, հատկապես՝ ծառայությունների և առևտրի ոլորտը, իսկ ՀՀ Կառավարության իրականացրած հակաճգնաժամային ծրագրերը ցանկալի արդյունք չեն տվել:

Ներածություն: 2020 թվականը լի էր անակնկալներով թե՛ Հայաստանի և թե՛ ամբողջ աշխարհի համար: Կորոնավիրուսային համավարակը, սկսվելով 2019 թ. վերջին ամիսներին և մեծ թափով տարածվելով 2020 թ. ընթացքում, զգալի ազդեցություն ունեցավ կյանքի բոլոր ոլորտների վրա: Այն տնտեսական, սոցիալական, քաղաքական, բարոյահոգեբանական ճգնաժամների հանգեցրեց ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Նման պայմաններում պետության գլխավոր խնդիրը արագ արձագանքելը և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելն էր:

2020 թ. մարտի 16-ին ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրություն, ինչի հետևանքով մի շարք սահմանափակումներ դրվեցին. ժամանակավորապես դադարեցվեցին գործարանների աշխատանքները, փակվեցին խանութներ, առևտրի կենտրոններ, ժամանցի վայրեր, բնակչության որոշ հատված անցավ հարկադրված պարապուրդի: Այս ամենը, բնականաբար, չէր կարող իր բա-